Մաղթեմ ժամի որք հանդիպիք
Ցիչել զիս տէր մի դանգալիք
Ցիչեսցէ զձեզ յիւր պալատեան
Ըստ իւր մեծի ողորմութեան։

թուին 1835 յամի տեառն, նոյեմբեր քսաներեքին։ Գրեցաւ ձեռամբ Մկրտիչ վարդապետի տէր Մարտիրոսեան Բաղիշեցւոյ հոգեծին գաւկին նորին բազմաշխատ աշակերտի։

Վերստին յիշատակեցաւ ի դուռն Սրբոց Յակոբեանց Աթոռոյս ձեռամբ վերոյիշելոյն.» (էջմ. Ցուց. էջ 315)։

ԱԲՐԱՀԱՄ ՎՐԴ. ԳՐԻԳՈՐԵԱՆ ՋՈՒԼՈՒՑԻ, Մբ. — Մականունամբ Պիւզիւկ. Ջռ. Վրդ. 1851. կը մեկնի Ս. Յակոբայ վանքէն 1856. առ. Պոնտոսի 1859—1862. Ջռ. եպս?։

ԱԲՐԱՀԱՄ ՎՐԴ. ԵՂԵԳԱՋՈՐԵՑԻ, Մբ. Ս. Էջմիածնի — 1765ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբ, Սիմէոն Երեւանցի կթզ.ի կռնպակով. (ԴԻՒԱՆ Գ. էջ. 151)։

ԱԲՐԱՀԱՄ ՎՐԴ. ԵՈՂԿԱՏՑԻ, Մբ. — կը յիշուի 1857ին։

ԱԲՐԱՀԱՄ ՎՐԴ. «ԿՋԱԿ» ՊԱԼԱՏՑԻ, Մբ.—Ս. Յակոբայ վանքին մէջ ընդօրինակած է ժողովածու խորագրով գրչագիր մը, ունի հետեւեալ յիշատակարանը. «ես Կղակատես խեղճուկ պանդոյր, Սբբահամ իբր բանի սպասաւորս Պալաթեցի. ի հաբան Ս. Յակոբայ, գողութեամբ առեալ գօրինակն՝ սակս այն փութիւ գըրելոյ անյարմարապէս այսքան ինչ, ի Սուրբ Երուսաղէմ, ՌՃՁԷ (=1738) ամին» (ՅԱ. թ. 51 էջ117-118)։ Ս. Յակոբայ իր յիշատակաց մասին (ՄՋ. թ. 532)։ Հաւանաբար Աբբահամ Աբ. Բիւզանդացին ըլլայ այս անձը։

ԱԲՐԱՀԱՄ ՎՐԴ. ՄԱՐԱՇՑԻ, Մբ.—Նւ. Աժաերխանի 1769 և Վանայ 1793. Ջռ. եպս. (1788). Ս. Յարութեան մէջ 1764ին ընդօրինակած է Մեկն. հինգ գրոցն Մովսէսի ի Վարդանայ և յիշատակ տուած է Ս. Ծննդեան Վանքին (յիշատակարան ՄՋ. թ. 280) կը վախճանի 1806ին։ Ս. Գլխադիրի արձաթեայ պատկերն իր յիշատակն է։

ԱԲՐԱՀԱՄ ՎՐԴ. ՄԻՐՏԻՆՑԻ, Մբ.— ՏՍՀ. (1331)։ Նոյն թուականներուն, եգիպտոսէն զինուորներ Ս. Յակոբայ վանքը գալով կը փնտռէին տեղւոյն առաջնորդը իր վարդապետանա-